**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԿՈԴ՝ Պ-713-17.11.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Պատգամավոր**<br><br>**Ալխաս Ղազարյան, Կառավարություն** | Նախագծի 1-ին հոդված | Շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br><br>«**Հոդված 1.** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 516-րդ հոդվածի՝<br><br>1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br><br>«4. Սույն բաժնով նախատեսված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով զինծառայող | Ընդունվել է՝ կատարվել է փոփոխություն | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համարվող անձն է կամ «Պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը կամավոր հիմունքներով ընդգրկված անձը՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում (այսուհետ՝ զինծառայող)»:<br><br>2) 5-րդ մասում «ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը» բառերը փոխարինել «այն անձը» բառերով:»: | | |
| 2 | **Պատգամավոր**<br><br>**Ալխաս Ղազարյան Կառավարություն** | Նախագծի փաթեթը լրացնել նոր՝ ««Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում | «Պաշտպանության մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի 29.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14-րդ | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կատարելու մասին» օրենքի նախագծով և հիմնավորմամբ: | մասով.<br><br>*«14. Պատրաստության և կիրառման ընթացքում աշխարհազորայինների վրա տարածվում են օրենքով սահմանված զինվորական կանոնագրքերի պահանջները, որոնց խախտումն աշխարհազորայինի համար առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:»:* | | |